

Հայ գրականություն

X դասարան

1.«Չի մեռնի այն ժողովուրդը, որ քեզ նման սիրել գիտի»... և՛ այս անբուժելի սիրո, և՛ «խալխին համով ղուլուղ անելու», և՛ ճշմարտությունը համարձակորեն արքաների ու թավաղների երեսին շարտելու համար մեծ Բեգարածն ու մեծ Ըղձավորը 1759-ին վերջնականապես վտարվեց Յերակլ Երկրորդի արքունիքից և բռնությամբ քահանա ձեռնադրվեց: «Դուն Էն գլխեն իմաստուն իս» բանաստեղծությունը Սայաթ-Նովան գրել է 1752-ին, երբ առաջին անգամ վտարվել է վրաց արքունիքից՝ բամբասանքների, դավերի, անկեղծ ու համարձակ, արժանապատիվ կեցվածքի պատճառով: Նա Յերակլին հորդորում է՝

Դուն Է՛ն գլխեն իմաստուն իս, խելքըտ հիմարին բաբ մի՛ անի,
Էրազումըն տեսածի հիդ մեզի մե հեսաբ մի անի.

.....
Դու քու սիրտն իստակ պահե.յադի խոսկըն ավտալու չէ:

Բայց և արքայական արժանապատվությամբ, ինչպես վայել է երգի արքային, հայտարարում է.

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ ջուրըն ո՛ւրիշ ջըրեն է,

Ամեն մարթ չի՛ կանա կարթա՝ իմ գիրըն ո՛ւրիշ գըրեն է:

Բունիաթըս ա՛վազ չիմանաս՝ քարա՛փ է, քար ու կըրե՛ն է՝

Սելավի պես, առանց ցամքի, դուն շուտով խարաբ մի՛ անի:

Սա ոչ միայն Յերակլին ուղղված արդարացում-խնդրանք է, այլև ինքնագնահատման հրաշալի ինքնահուշարձան, նաև՝

արքունիքից չհեռացվելու անկեղծության աղերս ու խնդրանք,

որովհետև այնտեղ էր մնում բանաստեղծի Սերը, առանց որի

Սայաթ - Նովան չէր պատկերացնում ինչպես իր կյանքը, այնպես

էլ իր արվեստը:

2.Հայ մեծ լուսավորիչ, գրող, մանկավարժ, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի մեծագույն տաղնապն ու ցավն են եղել հայ երեխաների անտարբերությունը հայերեն գրքերի նկատմամբ. Նա այդ ցավալի երևույթի պատճառը բացատրում է՝ելնելով հայ գրականության բովանդակությունից, լեզվի անմատչելիությունից և հերոսների առասպելական կամ պատմական ծագումից:«Բայց պատճառը շատ բնական էր. Էն լեզվըներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերը,

Նրանց անաճներն ու ասաճները, նրանք կարդում էին Էն բաները, որ մարդի սիրտ կարող է գրավել, չունքի սրտի բաներ էին, ո՞վ չի սիրիլ: Ո՞վ չի ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ինչ գատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՞ղ աչքս հանեն: Էլ ընչո՞վ Էրեխին քո լեզուն սիրիլ տաս.... Թե չէ մեր Նարեկը թողած՝ ախր ի՞նչպես էին նրանք Էն գրքերին հավանում»: Մեծ լուսավորիչը իր գլուխգործոցը գրել է հենց այս ծրագրով և մեզ է փոխանցել իր՝ մշտապես նորոգվող պատգամը. «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն և ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն Էկել և մեր օրին»: «Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուբան. Տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք»: Ուրիշ էին Աբովյանի ժամանակները. Հայաստան աշխարհս հեծում էր օտարի լծի տակ, չկային դպրոցներ, մարդիկ մտածում էին ֆիզիկական անվտանգության, հանապազօր հացի, գոյատևման մասին. հայոց պատմությունը հյուսվում էր օտար քաղաքներում՝ նվիրյալների տքնաջան ու համառ աշխատանքի շնորհիվ: Այս ամենով հանդերձ՝ հայը պահում էր իր ազգային դիմագիծը, իր ավանդույթները, ծիսակարգերը, ազգային երգերն ու ավանդությունները, երգում էր իր անկրկնելի Էպոսը: Այսօր մենք ունենք «արևի լույսը աշխարհին տանող», իր եռագույնով, զինանշանով ու օրհներգով, իր հնամենի մշակույթով աշխարհի հզորների հետ մրցող անկախ պետություն, որի պետական լեզուն գրական արևելահայերենն է (ինչի մասին այնքա՛ն երագում էր մեծ լուսավորիչը), և բոլորս պարտավոր ենք խորապես իմանալ, սիրել, փայփայել մեր անկողոպտելի գանձը, մեզ հայ պահող ամենահզոր կռվանը՝ մեր լեզուն:

Ուզում եմ իմ հասակակիցներին հիշեցնել Մեծն Աբովյանի խնդրանք- հորդոր- պահանջը. «Տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք»: Թույլ չտանք որևէ լեզվի հաղթանակը մեր լեզվի նկատմամբ, այն չսովորենք որպես քննական առարկա միայն, այլ սովորենք՝ նշանաբան ունենալով մեծ բանաստեղծի բյուրեղյա խտացումը. «Մեր լեզուն մեր խիղճն է դա, սուրբ հացը մեր սեղանի..... Նա պիտի մեր առաջին ու վերջին սերը լինի, ի՞նչ ունենք էլ աշխարհում, որ այսքան մերը լինի»: «ԵՎ երջանիկ է, ով քեզ կարող է կոչել ՄԱՅՐԵՆԻ»:

3. Հանճարեղ Դուրյանը՝ Սկյուտարի սոխակը, քսան տարեկան չկար, երբ աստղի պես գնաց «հավելուկ երկնից»՝ իր հետ տանելով մի անանց ցավ, որ միայն իրենը չէր, այլ ամենքինն ու յուրաքանչյուրինս:

«Մեր քնարերգության Վահագնը». այսպես է Դուրյանին բնութագրել մեր մյուս Մեծը՝ Պարույր Սևակը: Հիրավի, նա Վահագնի նման դուրս է վազում եղեգան փողից՝ այրվելով ու այրելով իր «քուրա մը խոսքով», որը հնչում է նրա յուրաքանչյուր քերթվածից: «Նրա կարճատև կյանքը մի անդադրում մահ էր», որը դարձավ անմահություն: Դուրյանի կարծիքով մարդը մեռնում է միայն այն ժամանակ, երբ «թառամում է հիշատակը և աննշան է մնում հողակույտը». Դուրյանի դեպքում չի եղել ոչ մեկը, ոչ էլ մյուսը, քանի որ մինչև հիմա ևզալիք բոլոր դարերում «հիացքներ կերթան իրեն հետևեն» (Մ. Մեծարենց):

Դուրյանի ցավը «ծաղիկ հասակի մեջ ցամքիլը» չէ, «ջերմ համբույրով դալկահար ճակատը չայրած՝ հողե բարձին հանգչեցունելը» չէ, «Էակ փունջ մը» չգրկած՝ ցուրտհողակույտը գրկելը չէ, ոչ էլ «հյուղին մուր- անունը հագնիլն» է, այլ՝

Չեզ մարդկության մեկ ոստը գոս՝
Չայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ՝օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար:

Երիցս ճշմարիտ է բանաստեղծը, քանի սիրելի մարդու, մտերիմի, հարազատի նկատմամբ անտարբերությունը աններելի է, իսկ հայրենիքի ճակատագրով ապրելը սիրանք չէ, այլ կեցություն ու կեցվածք: Այդ են ապացուցում սահմանին կանգնած մեր զինվորները: Դուրյանի «Իմ ցավը» բանաստեղծությունը հայրենասիրական մի հրաշալի աղոթք- պատգամ է մեզ, և մենք պետք է սրբությամբ ուսանենք այս դասը:

4. Ծիծեռնակաբերդի հուշարձան- կոթողը նախագծվել և կառուցվել է 1965-67թ.թ.(ճարտարապետ՝ Արթուր Թարխանյան, համահերիհակ՝ Սաշուր Քալաշյան): 1965-ի ապրիլի 24-ին լրանում էր Ցեղասպանության 50-րդ տարելիցը. Երևանում կազմակերպվեցին զանգվածային ցույցեր: Դրանց արդյունքում ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում կայացրեց Ծիծեռնակաբերդի բարձունքում հուշարձան կանգնեցնել: Ըստ ավանդության՝ այստեղ եղել է հայոց սիրո աստվածուհի Աստղիկի տաճարը, որի երկրորդ հարկում ապրող ծիծեռնակները լուրեր էին տանում Աստղիկի սիրեցյալին՝ Վահագն աստծուն(այստեղից էլ առաջացել է անվանումը): Ծիծեռնակաբերդը բաղկացած է երեք հիմնական կառույցներից՝ Չավերժության տաճար, «Վերածնվող Հայաստան» հուշասյուն և Հուշապատ: Չավերժության տաճարը բաղկացած է տասներկու սալերից, որոնք ժողովուրդը համարում է Արևմտյան Հայաստանում գտնվող տասներկու(հրականում դրանց թիվը վեց է) խոշորագույն նահանգների խորհրդահիշը. Իրականում տասներկու սալերը ընտրված են՝ ելնելով երկրաչափական օրենքներից: Հուշապատը կառուցվեց կառույցը բնակելի շինություններից անջատելու համար: Հիմա այնտեղ գրված են այն երախտավորների անունները, որոնք սատարել ու խնամել են եղեռնազարկ հայ ժողովրդին:

Ամեն տարի(սկսած 2010-ից) ապրիլի 24 –ին հաջորդող օրերին հարյուր հազարավոր ծաղիկները հավաքվում և վերամշակվում են՝ դառնալով պարարտանյութ և թուղթ, որոնք օգտագործվում են թանգարանի շրջակայքը պարարտացնելու և թանգարանի տպագրության հարցերը հոգալու համար: Դու էլ մասնակցի՛ր այս ձեռնարկումին:

Ցեղասպանության զոհ դարձած գրողներ՝ Չոիրապ, Վարուժան, Սիամանթո, Սևակ, Երուխան, Տիգրան Չյոկյուրյան, Արտաշես Հարությունյան և ուրիշներ:

Հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/